տասփիւռ ժողովին են դիմում «ի յերկրէն Փարսիանոյ ի քաղաքն Նախիջեւանոյ, ի գողայքաղաքն Աբրաներոյ, Ճահկոյ եւ Խոշկայշի-նոյ» արտագաղթած 150 հոգիանոց խումբը, որ ապաստանել էր «ի քաղաքն Գօզալ Հէսար, Թիրայ եւ Իզմիր» քաղաքներում[1]*: 1764 թուականի ապրիլի 15-ի խնդրագրով Իզմիրում ապաստանած 700 նախիջեւանցի դոմինիկեաններ, հաղորդելով, որ իրենց գաւառում մնացել են 60-70 անձինք, խնդրում են իրենց խոստովանահայր ուղարկել իրենց նորընծաներից պատրի Թոմաս Իսավերդենցին*[2]*, որ գտնւում էր Անկոնայում*[3]*: Նախիջեւանի հայ կաթողիկէների տապանաքարերի մեծ քանակութիւնը Իզմիրում եւ նրա շրջակայքում եւս վերեւում ասուածի վկայութիւնն են*[4]*:*

Գաւառի հայ կաթողիկէ բնակչութեան արտագաղթի վերջին ակորդը դրուեց 1752 թուականին, երբ Ազատ խան աֆղանի կողմից աւերուեցին Նախիջեւանի համարեա բոլոր հայկական գիւղերը եւ ով դեռ չէր հասցրել արտագաղթել՝ գերի տարուեց:

Կարապետեան Մերուժան

---

1 SC Armeni, vol. 7, f. 548r.

2 *Թոմաս Իսավերդենցի (1704[Խոշկաշէն]-1794[Անկոնա]) կենսագրութիւնը տե՛ս* **C. Longo.** *Isavertenç (Toumas)*, - Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastiques, t. XXVI, pp. 136-137.

3 SC Armeni, vol. 15, f. 224r.

4 **Հ. Յ. վ. Քօսեան.** *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա., Վիեննա, 1899, էջ 301-320: